

ՀԱՆԳԻՍ
ՏԹԹ. ԿԱՐՈ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ
(ԱՆԵԼ)
1922-2001

Խոր ցաւով եւ սրտի դառն կսկիծով կ'արձանագրենք մահը գրագետ բանաստեղծ Աննելի, Տեք. Կարօ Կարապետեանի, Բարիզի իր բնակարանին մէջ, Կիրակի, Յունիսի 24ին: Մահէն շարար մը առաջ էր, տանջագին հիւանդութիւնը զինքը գամած էր անկողինին, կարողացաւ հաղորդակցուելու իրեն այցելութեան եկած Թորգում Պատրիարք Սրբազն Հօր հետ, եւ յաջորդ Կիրակին ի Տէր հանգեաւ իր բազմարդին կեանքին 79 ամեայ հասակին:

Հանգուցեալի մարմինը զաւկին՝ Տեք. Վիգէն Կարապետեանին նախաձեռնութեամբ բերուեցաւ իր ծմնդավայր Նրուսաղէմ:

Թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Ուրբար, 29 Յունիսին, Ս. Յակոր Մայր Տաճարի Ս. Էջմիածին եկեղեցւոյ մէջ նախագահութեամբ Լուսարարապետ Տ. Նուրիան Արք. Մանուկեանի, որուն մասնակցեցան Սիարանութեան անդամները, Ժառանգաւոր սահերն եւ հոծ բազմութիւն մը:

Յուղարկաւորութեան ատեն Պատրիարք Սրբազն Հայրը որպէս հանգուցեալի 70 տարուայ բարեկամ եւ ընտանիքի անդամ, հետեւեցաւ արարողութեան:

Թաղման Կարգին ներկայ էին հանգուցեալին գրեթէ ամբողջ ազգականութիւնը. Տեք. Կարոյի զաւակը՝ Տեք. Վիգէն եւ Տիկ. Շնորհիկ Կարապետեաններ, եւ բոռները՝ Կարօ, Թորգում, Լորիկ, Նամոր, Դալար ու պատիկն Յարութիւն: Խնչպէս նաեւ հանգուցեալին եղյօթերը՝ Օր. Ազնիւ եւ Տիկ. Համես Սաֆիէն Կարապետեան եւ իր զաւակունք՝ Պարէս եւ Սաֆֆի եւ իր տիկինը՝ Հալա: Տիկ. Համեստին բոռները՝ Արմեն, Վիգէն եւ Սարօ, եւ իր Ֆինիքս Սրբունիա բնակող Աղաւանի բրոջ դուստրը՝ Անի Մանուկեան Լորենս:

«Աշխարհ ամենայն» երգին ներդաշնակութեան ներքոյ Սգոյ Թափօրը սկիզբ առաւ դէափի Ս. Փրկչայ Վանի, Սիոնի Դուռին դիմացը: Ժառանգաւոր Սամերու միաձայն մեղնդիին կ'ըմկերակցէր պատանի սբառւականներու թմրուկի ոփրմը:

Տեք. Կարօ Կարապետեանի անիւնը հողին յանձնուեց՝ հանգչելով իւր ազգականներու կողքին Սիոնի Ս. Փրկչի Հայոց Գերեզմանատան մէջ, ուր Նրուսաղէմի Հայոց սրտի խօսքը ներկայացուց Պրմ. Յակոր Անդրէասեան:

Գերեզմանատումէն դարձին, ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ Հոգեսուրնի պահուն Յարաբերութեանց Դիւանի Քարտուղար Կարապետ Յակորեանի սրտի խօսքէն յետոյ, Տ. Նորայր Արդ. Գազագեան կարդաց ցաւակցական նամակները: Տեք. Վիգէն Կարապետեանի շնորհակալութեան խօսքէն եւ «Հոգւոց» աղօքէն յետոյ, ներկաները իրենց ցաւակցութիւնը յայտնեցին ընտանիքի անդամներուն:

Թող Աստուած արժանացնէ հանգուցեալի հոգին իր երկմային լոյսերուն: Խաղաղութիւն իր հոգիին, օրինութիւն իր յիշատակին: